«ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Արդարադատության ակադեմիայի մասին» 2013 թվականի մայիսի 2-ի ՀՕ-50-Ն օրենքում (այսուհետ՝ Օրենք) «կոմիտեի դեպարտամենտում պետական» բառերը համապատասխան հոլովաձևերով փոխարինել «կոմիտեում քաղաքացիական» բառերով և դրա հոլովաձևերով։

Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասից հանել հանել ««Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի դեպարտամենտում պետական ծառայության մասին» և» բառերը։

Հոդված 3. Օրենքի 5-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին ենթակետով.

«2.1) երեք ինքնավար պաշտոն զբաղեցնող անձ (այսուհետ նաև՝ քննչական կոմիտեի քննիչ), որոնց նշանակում է Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահը (այսուհետ՝ քննչական կոմիտեի նախագահ).

2) 3-րդ մասում «2-րդ» բառերից հետո լրացնել « , 2.1-ին» բառերը.

3) 4-րդ մասում «դատախազ և դատավոր» բառերը փոխարինել «դատախազ, դատավոր և քննիչ» բառերով.

4) 7-րդ մասում «դատավոր կամ դատախազ» բառերը փոխարինել «դատավոր, դատախազ կամ քննիչ» բառերով.

5) 7-րդ մասի 1-ին կետում «2-րդ» բառերից հետո լրացնել « , 2.1-ին» բառերը։

Հոդված 4. Օրենքի 8-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասում «գլխավոր դատախազի» բառերից հետո լրացնել «քննչական կոմիտեի նախագահի» բառերը, իսկ «երեք» բառը փոխարինել «հինգ» բառով.

2) 4-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ ենթակետով.

«3) սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց, քննիչների, քննչական կոմիտեում քաղաքացիական ծառայողների վերաբերյալ՝ միայն քննիչ և սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված անդամներով։».

3) 5-րդ մասում « 4-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով» բառերը փոխարինել «4-րդ մասով» բառերով, իսկ «դատախազ կամ դատավոր» բառերը փոխարինել «դատախազ, քննիչ կամ դատավոր» բառերով.

4) 7-րդ մասում «գլխավոր դատախազը» բառերից հետո լրացնել «քննչական կոմիտեի նախագահը» բառերը.

5) 8-րդ մասում «երեք» բառը փոխարինել «հինգ» բառով:

Հոդված 5. Օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասում «հինգ» բառը փոխարինել «յոթ» բառով:

Հոդված 6. Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետում «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահին (այսուհետ՝ քննչական կոմիտեի նախագահ)» բառերը փոխարինել «քննչական կոմիտեի նախագահին» բառերով:

Հոդված 7. Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասից հանել «դեպարտամենտում» բառերը:

Հոդված 8. Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի «երեք» բառը փոխարինել «մեկ» բառով:

Հոդված 9. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ **Վ.Խաչատուրյան**

202 թ. _____

Երևան

ՀՕ- -Ն